ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"ASSESSMENT AND TESTING CENTER"
STATE NON TRADE ORGANIZATION

ՀՀ, ք. Երևան, 0025,Չայլախյան 4
Հեռ. 010 57 63 37,
E-mail: info@atc.am

Chaylakhyan str. 4,Yerevan, 0025, RA
Tel. +374 10 57 63 37,
E-mail: info@atc.am

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 07.02.2024թ. «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողովների ձևավորման, դրանց գործունեության և ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման և ատեստավորման կարգը հաստատելու մասին» թիվ 07-Ն որոշման դրույթները՝ 2024թ. դեկտեմբերի 16-ին տեղի ունեցավ «Ագրոնոմիա», «Ագրոտնտեսագիտություն», «Ծրագրավորման հիմունքներ և ավտոմատացված համակարգեր», «Խոհարարություն», «Գրաֆիկա» առարկաների մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման առարկայական բողոքարկման հանձնաժողովների նիստը /բացառությամբ «Սննդի տեխնոլոգիա», «Անասնաբուժություն», «Հացաթխում և հրուշակագործություն», «Վեբ դիզայն», «Ցանցեր 1», «Ցանցեր 2», «Ոսկերչություն» առարկաների, որոնցից ատեստավորման արդյունքների բովանդակային բողոքարկում չի եղել և բողոքարկման հանձնաժողով չի ձևավորվել/, և ընդունվել են հետևյալ որոշումները .

1. «Խոհարարություն» առարկայի առաջադրանքների բողոքարկման արդյունքում ուսումնասիրվել են բողոքարկումները, ատեստավորվողների միավորները պահպանվում են:
2. «Ծրագրավորման հիմունքներ և ավտոմատացված համակարգեր» առարկայի առաջադրանքների բողոքարկման արդյունքում ուսումնասիրվել են բողոքարկումները, ատեստավորվողների միավորները պահպանվում են:
3. «Գրաֆիկա» առարկայի առաջադրանքների բողոքարկման արդյունքում ուսումնասիրվել են բողոքարկումները, ատեստավորվողների միավորները պահպանվում են:
4. «Ագրոնոմիա» առարկայի վերաբերյալ.

4.1. Հետևյալ առաջադրանքը չունի ճիշտ պատասխան: Միավոր տալ այն ատեստավորվողներին, ովքեր այս առաջադրանքից միավոր չեն ստացել.

«Նշվածներից ո՞րը ցրտադիմացկուն բանջարային բույս չէ: (1միավոր)
1) կաղամբ 2) գազար 3) ճակնդեղ 4) ամսաբողկ»:

4.2. Հետևյալ առաջադրաքնում 3 ճիշտ պատասխանի փոխարեն առկա է 6 ճիշտ պատասխան: Միավոր տալ նաև այն ատեստավորվողներին, ովքեր ընտրել են 1-ին, 2-րդ, 5-րդ տարբերակներից որևէ մեկը /յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար մեկ միավոր/.

« Տրվածներից 3-ում արտացոլված է օրգանական գյուղատնտեսության իրավական դաշտը: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. ՀՀ Արտահանման իրավական կարգավորումներում

2. ՀՀ Մաքսային օրենսգրքում
3. ՀՀ Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքում
4. ՀՀ Սահմանադրությունում
5. ՀՀ Ներմուծման իրավական կարգավորումներում
6. ՀՀ Հարկային օրենսգրքում
7. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունում»:

4.3. «Ագրոնոմիա» առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:

5. «Ագրոտնտեսագիտություն» առարկայի վերաբերյալ.
5.1. Հետևյալ առաջադրանքում ճիշտ է 6-րդ պատասխանը: Մեկ միավոր տալ այն մասնակիցներին, ովքեր ընտրել են 6-րդ պատասխանը.
« Տրվածներից 3-ը փողի գործառույթներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)
1. հիմնական միջոցի
2. կուտակման միջոցի
3. վճարման միջոցի
4. շրջանառու միջոցի
5. փոխանակման միջոցի
6. շրջանառության միջոցի
7. փոխանցման միջոցի »:

5.2. «Ագրոտնտեսագիտություն » առարկայի այլ առաջադրանքների բողոքարկումների արդյունքում միավորները պահպանվում են:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ